Տնտեսական համագործակցության հարցերով հայ-լեհական միջկառավարական հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2010թ. մարտի 12-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև տնտեսական համագործակցության վերաբերյալ» Համաձայնագրի: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնյանը:
Հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 2010թ. հուլիսի 13-ին՝ Երևանում: Ներկայումս անց են կացվել հանձնաժողովի 5 նիստեր: Հերթական նիստը կկայանա ս.թ. դեկտեմբերի 19-ից 20-ը Վարշավայում: